

Աղասի Չ. Թադևոսյան
Պատմ. գիտ. թեկնածու

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Մաս երրորդ: Սոցիալական շերտավորման և մշակութային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրներն անցած 20-ամյակում*

Մուտք

Հետխորհրդային Երևանում տեղի ունեցած արմատական փոխակերպումներից մեկը վերաբերում է քաղաքի բնակչության սոցիալական կազմի փոփոխությանը: Աղքատությունն ու անհավասարությունը փոխեցին ոչ միայն նրա սոցիալական կառուցվածքը, կարգավիճակային դերերի աստիճանասանդղակը, դրանց գնահատման չափանիշները, այլև ընդհանրապես՝ ողջ Երևանի նկարագիրը:

Անկախության տարիներին Երևանն օբյեկտիվորեն դարձավ Հայաստանում ծավալվող սոցիալ-տնտեսական գործընթացների այն ընդհանուր թատերաբեմը, ուր հանրապետության ողջ տարածքից հոսում էր անցումային շրջանի մարտահրավերներին դիմակայելու ջանքեր գործադրող, առավել մրցակցային ու աղապտատիվ հատկություններով օժտված բնակչությունը: Մակայն առանցքային հիմնախնդիրը, որը կարելի է համարել ճակատագրական, այն է, որ ի սկզբանե այս գործընթացներն ունեին տարերային բնույթ: Չկար հստակ մշակված որևէ անցումային ծրագիր, որը կարող էր կանոնակարգել անցումը հասարակության խորհրդային տիպից արդիականի և հստակեցնել այդ գործընթացում Երևանի ունեցած դերը: Սկզբում հիմնական նպատակադրումները վերաբերում էին ինստիտուցիոնալ ռեֆորմներին, սակայն կային նաև ընդհանուր կարգի դատողություններ այն մասին, որ Հայաստանը պետք է դառնա սեփականատերերի երկիր: Բայց այդ ամենի իրականացման եղանակը, այսպես կոչված՝ «շոկային թերապիան», հասարակությանը վերևից պարտադրված, օտարածին մի ծրագիր էր, որը Հայաստանը նետեց խորը աղքատության մեջ¹:

* **Նոր Երևանի** բնակչության սոցիալական շերտավորման քննությանը նվիրված ներկա հրապարակումը տպագրելով **հին Թիֆլիսում** նույն հիմնախնդրի շուրջ ժամանակին ծավալված դիսկուրսի ուսումնասիրությունից հետո, համապատասխան եզրահանգումները թողնում ենք ընթերցողին: Հոդվածի համար հիմք են հանդիսացել 1994-1995, 1996, 2000, 2004, 2007, 2009 և 2011 թվականներին հեղինակի կողմից Երևանում իրականացված աղքատության, գոյատևման ռազմավարության, հասարակության շերտավորման, մարդկային զարգացման վրա աղքատության հետևանքների ազդեցությանը վերաբերող հետազոտությունների նյութերը: Օգտագործվել են նաև աղքատությանը, անհավասարությանը և սոցիալական հիմնախնդիրներին վերաբերող այլ հետազոտությունների ու գրավոր աղբյուրների տվյալները: Հոդվածն ընդունվել է տպագրության 7. 06. 2011: հմբ.:

1 Այս գործընթացի բացասական հետևանքների ու ծախսերի մասին տե՛ս Griffin K. Investment and Growth, in: Growth, Inequality and Poverty in Armenia, UNDP, 2002, pp. 18-19:

Միևնույն ժամանակ, բացարձակապես հաշվառված չէին քաղաքային նոր հասարակության ձևավորման խնդիրները: Այդ պատճառով էլ հասարակական փոխակերպումները, հատկապես շերտավորման գործընթացներն ունեցան ծայրաստիճան տարերային, հակահումանիստական, անօրինական ու ստվերային բնույթ: Դրան մասնավորապես նպաստեց անձնական կապերի ու շահերի հիմքի վրա կազմակերպված մեխանիկական համագործակցության գերակայությունը²: Շատ փորձագետների կարծիքով՝ այդ տարիներին ձևավորված կլանային համակարգը արմատականորեն ազդեց սոցիալական նոր իրականության ձևավորման վրա³: Մեծ հիմնախնդիր դարձավ հասարակության սոցիալական շերտավորման գործընթացներում արտոնյալության գործոնի դերակատարությունը:

Հետխորհրդային Հայաստանի մայրաքաղաքում հասարակական հարաբերությունները կենտրոնացած էին դրանց ձևավորմանը մասնակցության և նպաստավոր տեղ զբաղեցնելու համար պայքարի վրա: Քաղաքային բնակչության ոչ բոլոր խավերն էին հասկանում, որ գործընթացին իրենց մասնակցությունը կարևոր է, քանի որ դրա միջոցով իրենք կարող են ձեռք բերել որոշակի կարգավիճակ՝ սոցիալական աստիճանակարգման նոր բուրգում: Շատ խավեր էլ հասկանում էին դրա կարևորությունը, սակայն չունենալով ազդեցության մեխանիզմներ, ճնշվեցին արտոնյալություն ձեռք բերած կլանային ուժերի կողմից ու ֆինանսական, ուժային, վարչական և այլ մեխանիզմների կիրառմամբ մղվեցին լուսանցքային կարգավիճակի⁴:

Կախված սոցիալական կառուցվածքի ու կարգավիճակի փոխակերպումներից՝ քաղաքի տարածքում տեղի ունեցան նաև բնակչության զգալի վերաբաշխումներ ու վերաբնակեցումներ: Դրա հետևանքով փոխվեցին քաղաքի կենտրոնի բնակչության սոցիալական կազմը, քաղաքային ընտրախավերի նկարագիրը, կրթամշակութային ցեղը: Արմատականորեն փոխակերպվեցին նաև նյութական ու ոչ նյութական արժեքների փոխանակային գործընթացները և դրանցում նոր կազմավորվող սոցիալական խավերի մասնակցության ձևերն ու չափերը:

1. Աղքատության աննախադեպ աճը և նրա հետևանքները

Ասել, թե խորհրդային շրջանում Երևանում չկային աղքատներ, ճիշտ չի լինի: Սակայն ասել, թե աղքատությունը խոչընդոտում էր հասարակության զարգացման գործընթացները, նույնպես ճիշտ չէ⁵: Հայաստանի անկախացումից հետո իրավիճակը արմատապես փոխվեց: Տնտեսության փլուզումը, շրջափակումը, 1988 թ. երկրաշարժի ծանր հետևանքները, Գարաբաղյան պատերազմը և ամենակարևորը՝ երկրի զարգացման և անցումային գործընթացների իրականացման համար կառավարող վերնախավի ոչ բավարար քաղաքական կամքը, համատարած կոռուպցիան և հանրային սեփականության վերաբաշխման գործընթացում իշխանության հովանավորչությամբ իրականացված թալանը, իշխան-

2 Մեխանիկական ասելով՝ նկատի ունենք հասարակական հարաբերությունների այն կերպը, որը կառուցվում է խմբակային պատկանելության հիմքի վրա նույնականացման սկզբունքով, ինչպես ասենք՝ ընտանիքի, կլանի, ազգատոհմի կամ ընկերական շրջանակի անդամ լինելը: Մեխանիկական համագործակցության մասին տես Дюркгейм Э., О разделении общественного труда, М., 1996.
 3 Տե՛ս Погосян Г., Армянское общество в трансформации, Ереван, 2003, сс. 410-412.
 4 Տե՛ս Փալստյան Մ., Սոցիալական անհավասարություն, սոցիալական շարժումություն, սոցիալական կոնֆլիկտ, Եր., 2000, էջ 9:
 5 Տե՛ս Փարիթյան Մ., Աղքատությունը գյուղում և քաղաքում, Եր., 2001:

նությունից հասարակության մեծամասնության օտարումը և այլ բացասական երևույթները պատճառ դարձան անցումային գործընթացների ճախողման, հասարակության մեծամասնության աղքատացման ու ծայրահեղ բևեռացման համար⁶: Այս հիմնախնդիրները հատկապես սուր ձևով նկատվեցին Երևանում, որտեղ բնակչությունը, հաշված ամիսների ընթացքում կորցնելով կենսապահովման նվազագույնը ապահովելու հնարավորությունը, տարերայնորեն հայտնվեց աղքատության մեջ: Քաղաքի գրեթե ողջ բնակչությունը կանգնեց գոյատևման ծանր խնդրի լուծման առջև, սակայն այդ իրավիճակից հաջողվեց դուրս գալ ոչ թե գիտելիքների ու մարդկային ունակությունների առումով առավել մրցունակներին, այլ նրանց, ովքեր ունեին իշխանության լծակները անօրինականորեն ի շահ իրենց բարօրության բանեցնելու մատչելիություն: Հասարակությունը բաժանվեց «արտոնյալների» ու «ոչ արտոնյալների», ինչը սկզբում դեռևս կառուցվածքային բնույթ չունենալու պատճառով խիստ նկատելի չէր, սակայն հետագա տարիներին այն ստրուկտուրիզացվեց և վերածվեց քաղաքի զարգացումը կաշկանդող ծանր արգելակի:

Անկախության շրջանում Երևանի քաղաքային կյանքում ի հայտ եկած թերևս հիմնական նորույթը Երևանի բնակչության սոցիալական վիճակի կտրուկ վատթարացումն էր 1990-ականների առաջին կեսին: Այս շրջանում, ըստ որոշ աղբյուրների, մայրաքաղաքի բնակչության շուրջ 80 % -ը ապրում էր աղքատության գծից ներքև⁷: Նույնիսկ 1999 թվականին, երբ պատերազմի ավարտից անցել էր շուրջ հինգ տարի, և թվում էր, թե քաղաքում կյանքը բավականաչափ կարգավորվել է, Երևանի բնակչության 58.4%-ն ապրում էր աղքատության մեջ, իսկ 24.8 %-ը համարվում էր ծայրահեղ չքավոր կամ աղքատ⁸: Ընդհանուր առմամբ այդ տարիներին Երևանի սոցիալական վիճակը հանրապետական միջինից ավելի վատ էր, այն պարզ պատճառով, որ մի կողմից՝ դեռևս տնտեսությունը բավականաչափ աշխույժ չէր, որ թույլ տար բնակչությանը վաստակել ու բավարարել իր կենսապահովման նվազագույն կարիքները, մյուս կողմից՝ ի տարբերություն գյուղերի ու մարզային քաղաքների, Երևանը չունեց հողատարածքներ, որտեղ մարդիկ կարող էին բնատնտեսական եղանակներով առաջին անհրաժեշտության որոշ գյուղմթերքներ արտադրել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առավել ծանր տարիներին Երևանից նույնիսկ բնակչության ժամանակավոր հոսքեր են նկատվել դեպի գյուղեր՝ բարեկամներին կամ հարազատներին գյուղատնտեսական աշխատանքներում օգնելու և փոխարենը պարենով փոխհատուցում ստանալու նպատակով:

Այս ծայրաստիճան լարված սոցիալական իրավիճակը սկսեց որոշ առումով կարգավորվել 2004 թվականին ընդունված «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի»՝ ԱՀՌԾ-ի իրագործմանը զուգահեռ: ԱՀՌԾ-ին զուգահեռ, Երևանում հիմնականում շինարարության, մասամբ նաև ժամանցային ծառայությունների, տնտեսության մշակող որոշ ոլորտների ու առևտրի աշխուժացումը հանգեցրեց աշխատատեղերի աճին, ինչը հնարավորություն տվեց զգալիորեն

6 Այս խնդրին առանձնակի անդրադարձ ենք կատարել մեր մեկ այլ աշխատությունում՝ Թադևոսյան Ա, Աղքատության համակարգային հիմքերը և հաղթահարման ուղիները Չայաստանում, Եր., 2001, էջ 14:

7 Տե՛ս Թադևոսյան Ա., Հասարակության շերտավորման և աղքատության ձևավորման պատկերը Չայաստանում 1991-1997 թթ., Եր., 1998, էջ 27: Թադևոսյան Ա., Աղքատության համակարգային հիմքերը, էջ 15: Погорсян Г., նշվ. աշխ., էջ 263:

8 Տե՛ս Կայուն զարգացման ծրագիր, Եր., 2007, էջ 44:

կրճատել ծայրահեղ աղքատության ծավալները: 2005 թվականին աղքատությունը, ըստ պաշտոնական տվյալների, նվազեցվեց մինչև 27.3 %, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 3.5 %⁹: Սա, 1999 թ. ցուցանիշների հետ համեմատած, զգալի առաջընթաց էր, ինչը նկատելիորեն ազդեց քաղաքի սոցիալական դիմագծի փոփոխության վրա: Մակայն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդեն առաջին տարում՝ 2009 թվականին, աղքատության ծավալը միանգամից աճեց ավելի քան 10 %-ով, անցնելով 30 %-ի սահմանը¹⁰, ինչը աստիճանաբար նկատելի դարձավ նաև քաղաքի աղքատ ու անապահով խավերի կյանքում: Սրվեցին այդ խավերի ինչպես սննդի, կուճուրկ-կենցաղային, այնպես էլ առողջապահական ու կրթական կարիքները հոգալու հիմնախնդիրները:

Եթե փորձենք ներկայացնել Երևանի սոցիալական շերտավորման պատկերի փոփոխությունները՝ ըստ շրջափուլերի, ապա կարելի է առանձնացնել հետևյալ փուլերը.

1. 1990-1999 թթ.՝ աղքատության աճի ու սոցիալական շերտավորման տարերային փուլ,
2. 2000-2011 թթ.՝ աղքատության ու սոցիալական շերտավորման կառուցվածքային փուլ:

Ներկայացված առաջին կամ տարերային փուլն իր հերթին կարելի է բաժանել երկու ենթափուլերի.

- ա) 1991-1994 թթ.՝ պատերազմի և անցումային շրջանի ճգնաժամային տարիներ,
 - բ) 1995-1999 թթ.՝ էներգետիկ և տնտեսական ճգնաժամից դուրս գալու տարիներ:
- Իսկ ահա երկրորդ փուլն էլ կարելի է բաժանել ևս երկու ենթափուլերի.
- ա) 2000-2007 թթ.՝ տնտեսության կայունացման և հասարակության սոցիալական շերտավորման հստակեցման շրջան,
 - բ) 2008-2011 թթ.՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի և առկա սոցիալական շերտավորման ամրապնդման շրջան:

2. Սոցիալական շերտավորման տարերային փուլը Երևանում 1991-1999 թթ.

Հասարակության սոցիալական շերտավորման համար հիմնարար այս տարիները որոշիչ դարձան Երևան քաղաքի հասարակական կյանքի ու ըստ սոցիալական գործոնի՝ նրա շերտավորման համար: Այս շրջանը պայմանականորեն կարելի է անվանել **տարերային** այն առումով, որ ծավալվում էր նախկին սոցիալական կառուցվածքի արագ փլուզումը սոցիալական դիրք ու վաստակ ապահովող հին կարգավիճակային աստիճանակարգման բուրգի հետ միասին: Չուզահեռաբար, ինքնաբերական կերպով, օրենքից դուրս և անկառավարելիորեն ընթանում էին նոր կարգավիճակների ձևավորումն ու հարստության վերաբաշխումը: Այս գործընթացների վրա, ըստ մեր փորձագիտական հարցումների, հիմնական ազդող ուժերն էին.

9 Տե՛ս նույն տեղում:
10 Տե՛ս Համաշխարհային բանկ. աղքատությունը Հայաստանում աճել է <http://www.news.am/arm/news/51008.html>

- ա) իշխող քաղաքական վերնախավը,
- բ) պատերազմին մասնակցող ռազմական վերնախավը,
- գ) իշխանության հետ սերտաճող քրեական խմբավորումները:

Սոցիալական շերտավորման տեսանկյունից 1991-1994 թվականները ունեցան վճռական նշանակություն: Այս ժամանակաշրջանում արձանագրված երկու իրադարձություն վճռորոշ եղան հասարակության լայն շրջանակներին նյութական արժեքների ոլորտի փոխանակային գործընթացներից օտարելու համար: Նման օտարման հետևանքով բնակչության շուրջ 80 %-ը հայտնվեց գոյատևման հիմնախնդրի լուծման առջև¹¹:

Հիշատակված իրադարձությունները 1993 թ. իրականացված դրամափոխությունն ու 1994 թ. սկսված սեփականաշնորհման գործընթացն էին: Երկուսն էլ, ըստ մեր իրականացրած փորձագիտական հարցման տվյալների, հանգեցրին բնակչության զանգվածային ունեզրկմանը: Պատահական չէ, որ հասարակության մեծ մասը այս գործընթացը որակեց որպես պետական իշխանության լծակներով տիրապետող շրջանակների կողմից հանրապետության բնակչության հանդեպ իրականացված «թալան»:

1993 թ. նոյեմբերին սկսված դրամափոխությունը հանգեցրեց նրան, որ բնակչության հիմնական մասին հնարավորություն չտրվեց ազգային դրամի փոխարկել իր դրամական կուտակումները, փաստորեն՝ մարդիկ գրկվեցին տարիների ընթացքում իրենց կուտակած փողից: Խնդիրն այն է, որ սահմանված կարգով մեկ անձը կարող էր ազգային դրամի փոխարկել ոչ ավելի, քան 50000 ռուբլի, որի դիմաց տրվում էր ընդամենը 250 դրամ, որն էլ հավասար էր 18 ԱՄՆ դոլարի: Հանրապետության բնակչության ճնշող մեծամասնությունն ուներ շատ ավելի գումարներ, քան այդ թույլատրելի սահմանն էր, և պետության կողմից կիրառված հնարքի հետևանքով մարդիկ կորցրին փոխարկման թույլատրելի սահմանը գերազանցող իրենց բոլոր դրամական միջոցները: Բնակչության մեջ սահմանափակ արտոնյալների բացառիկ խմբերը նրանք էին, ովքեր անձնական կապերի միջոցով, նախապես իմանալով կատարվելիքը՝ ժամանակին հասցրել էին իրենց դրամական միջոցները փոխարկել ԱՄՆ դոլարի:

Նման մեկնարկային դրամական կարողությամբ հանրապետության բնակչությունը 1994 թ. մտավ սեփականաշնորհման գործընթացի շրջափուլ: Եթե դրան ավելացնենք նաև այն, որ հայտնվեցին մարդիկ, ովքեր անօրինական եղանակներով, ինչ-ինչ ճանապարհներով փոխարկում էին անսահմանափակ քանակությամբ դրամ, ապա պարզ է, որ դրամափոխությունը հանգեցրեց բնակչության մի զգալի հատվածի ունեզրկմանը և շատ մեղ թվով մարդկանց հարստացմանը: Ինչ վերաբերում է սեփականաշնորհմանը, ապա դրան մասնակցելու համար մարդկանց բաժանվեցին **սեփականաշնորհման սերտիֆիկատներ**, որոնց արժեքը 20000 դրամ էր: Մի կողմից՝ սեփականաշնորհմանը նախորդած և բնակչության մի զգալի մասին ունեզրկման հասցրած դրամափոխության հետևանքով, մյուս կողմից էլ՝ գոյատևման սուր հիմնախնդիրների պատճառով դրամի խիստ կարիք ունեցող բնակչությունը ստվերային շուկայում վաճառքի հանեց իր սերտիֆիկատները, որոնց գինն այդտեղ շուրջ տաս անգամ ցածր էր ինքնարժեքից և տատանվում էր 2000-4000 դրամի սահմաններում¹²: Հարկ է նկատել, որ արդեն

11 Տե՛ս Թադևոսյան Ա., Աղքատության համակարգային հիմքերը, էջ 12-13:

12 Տե՛ս McKinley T., Poverty and Character of Growth, in: Growth, Inequality and Poverty in Armenia, UNDP, 2002, pp. 44-45: Այս գործընթացների մանրամասն վերլուծությանը հեղինակն անդրադարձել է՝ Թադևոսյան Ա., Սեփականաշնորհման քաղաքական հետևանքները, «Չայացք Երևանից», 1998, N 5, էջ 33-37:

մինչև 1997 թվականը սեփականաշնորհվեց ինչպես մանր ու միջին, այնպես էլ խոշոր ձեռնարկությունների հիմնական մասը¹³: Սեփականաշնորհման գործընթացի կլանային բնույթը պայմանավորեց ՀՀ բնակչության աղքատացման ու սոցիալական շերտավորման կառուցվածքային առանձնահատկությունը:

Ըստ փորձագիտական հարցման տվյալների՝ Հայաստանում **կլանային համակարգ** անվանումը տրվում էր քաղաքական ոլորտում ձևավորված այն երևույթին, որը բնութագրվում էր պետական իշխանության լծակները սեփական խմբակային ու անձնական շահերին ծառայեցնելու հատկանիշով: Այս համակարգը բնորոշվում էր հարստության կուտակման հնարավորություն տվող բոլոր ռեսուրսների նկատմամբ արտոնյալ վերահսկողությամբ և այդ ռեսուրսներից բնակչությանը օտարված պահելու մեխանիզմների տիրապետմամբ:

Կլանային համակարգի ձևավորմամբ Հայաստանում սոցիալական շերտավորման գործընթացները մտան նոր փուլ: Բացարձակապես տարերային փուլին փոխարինելու եկավ այդ համակարգի ինքնահաստատման և «բյուրեղացման» փուլը: Կլանային համակարգի ձևավորման սկիզբը կարելի է համարել 1995 թ. Ազգային ժողովի և 1996 թ. նախագահական ընտրությունները: Այս ընտրությունները ցույց տվեցին, որ այսուհետ հարստության վերաբաշխման ու վերարտադրության գործընթացները վերահսկում են պետական իշխանության լծակները իրենց ձեռքը վերցրած ուժերը, ուստի սոցիալական շարժունության ապահովման հիմնական երաշխիքը տալիս է այդ համակարգը:

Ինչ վերաբերում է 1995-1999 թթ., ապա այս շրջանը ունեցել է յուրահատուկ ընթացք: Խնդիրն այն է, որ չնայած գրանցված տնտեսական կայունացմանն ու աճին, սոցիալական շերտավորման ու աղքատության հաղթահարման տեսանկյունից առաջընթացը չնչին էր: Նկատենք, որ 1996-1999 թթ. ժամանակահատվածում աղքատության մակարդակը նվազել էր 57,4 %-ից ընդամենը 51.6%-ի: Խնդիրն այն է, որ ըստ փորձագիտական վերլուծությունների, այս շրջանի տնտեսական աճը չի եղել զբաղվածություն ստեղծող աճ¹⁴:

Սակայն նշված ժամանակահատվածի համար առավել բնութագրականն այն էր, որ հստակեցվեցին մայրաքաղաքի սոցիալական աստիճանակարգման ձևավորման հիմքերն ու սկզբունքները: Սոցիալական շարժունության հնարավորություն ստեղծող հիմնական եղանակը դարձավ ոչ այնքան տնտեսական գործունեությունը, որքան կլանային համակարգի աստիճանակարգում տեղ զբաղեցնելն ու դրա ընձեռած արտոնյալ կարգավիճակը տնտեսականին ծառայեցնելը:

3. Սոցիալական շերտավորման գործընթացների առանձնահատկությունը 2000-2011 թթ.

Երևանի բնակչության սոցիալական կազմում նախորդ տարիներին տեղի ունեցած փոխակերպումներն ու շերտավորումները 2000-2001 թթ. ձեռք բերեցին առավել հաստատուն բնույթ: Այդ տարիներին հաջորդած շրջանը համարվում է տնտեսական աճի ժամանակահատված: Հատկապես Երևանում տնտեսական աշխուժությունը ակնհայտ էր: Դրան նպաստող գլխավոր գործոնը քաղաքում ծայր առած շինարարական եռուզեռն էր: Աշխատատեղերի ժամանակավոր

¹³ Տե՛ս McKinley T., նշվ. աշխ., էջ 44:
¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 73:

ավելացումը, իհարկե, որոշ աշխուժություն մտցրեց Երևանի կյանքում: Սակայն, ինչպես ցույց են տալիս մեր որակական հարցումները, ստեղծված աշխատատեղերը և աշխատավարձերը մարդկանց հիմնականում թույլ էին տալիս լուծելու իրենց գոյատևման խնդիրները: Քաղաքի կյանքում ու բնակչության սոցիալական վիճակում նկատելի հիմնական դրական տեղաշարժը բնակչության մի մասի անցումն էր աղքատության ծայրահեղ պայմաններում գտնվող և գոյատևման նվազագույնը ինքնուրույն բավարարելու անընդունակությամբ բնութագրվող շերտերից գոյատևման կարիքների նվազագույնը մասնակիորեն բավարարելու ունակություն ունեցող շերտերի: Այսինքն՝ որոշ դրական դինամիկա նկատելի էր, բայց միևնույն է, քաղաքային բնակչության մի զգալի մասը դեռևս գտնվում էր գոյատևման խնդիրների լուծման տարբեր աստիճաններում և նրա սոցիալական ռազմավարությունը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից առաջ շարունակում էր մնալ գոյատևման շրջագծում: Դրա մասին է խոսում նաև այն, որ 2006 թ. Երևանում շուրջ 70 % էին կազմում այն տնային տնտեսությունները, որոնց եկամտի մինչև 50 %-ը արտերկրում ապրող կամ աշխատող իրենց հարազատներից ստացվող դրամական փոխանցումներն էին կազմում¹⁵: Ինչ վերաբերում է 2008 թ. վերջերին սկսված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից մեկ տարի հետո ստեղծված իրավիճակին, ապա թե՛ պաշտոնական և թե՛ ոչ պաշտոնական տվյալներով՝ աղքատների, ծայրահեղ աղքատների ու գոյատևողների թիվը զգալիորեն աճել էր:

Վերջին տասնամյակի սոցիալական շերտավորման գործընթացների առանձնահատկությունն այն է, որ հիմնականում արդեն հստակեցվել են հարուստների ու աղքատների խմբերը: Մասնակիորեն ձևավորված են նաև միջին ու կայուն եկամուտ ունեցողների խմբերը, որոնց սոցիալական դրությունը, սակայն, դեռ շատ խաբուսիկ է, քանի որ հաշված ամիսների ընթացքում այս խմբի մեջ մտնողների մի զգալի մասը կարող է կորցնել իր սոցիալական կարգավիճակը: Այս խավը կազմում է քաղաքի բնակչության մոտ 10%-ը: Բնակչության մնացած հատվածը, որը տատանվում է ավելի քան 30 % աղքատների և 10% միջին ու 2% հարուստ խավերի միջև, լրացնում են գոյատևման տարբեր կարգավիճակներում և աղքատության ռիսկային գոտում գտնվող խմբերը, որոնք կազմում են բնակչության շուրջ 58 %-ը:

4. Փոխանակային գործընթացները և աղքատությունը

Վերը ներկայացված թվային տվյալները ցույց են տալիս, որ անկախության առաջին տասնամյակում մայրաքաղաքի բնակչության մեծամասնությունը, որը որոշ տատանումներով կազմել է 600000-800000 մարդ, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ նույնիսկ ավելին, զրկված է եղել Երևանում ընթացող փոխանակային գործընթացներին լիարժեք մասնակցության հնարավորությունից: Ուստի նրա սոցիալական կյանքի ռազմավարությունը ունեցել է ոչ թե զարգացման, այլ գոյատևման բնույթ¹⁶: Արդեն 2000-ականների առաջին կեսին Երևանի բնակչու-

15 Տե՛ս Միգրացիա և մարդկային զարգացում. հնարավորություններ և մարտահրավերներ, Մարդկային զարգացման ազգային զեկույց, 2009, էջ 124:

16 Փոխանակային գործընթացներ ասելով՝ նկատի ունենք հասարակությունում տեղի ունեցող նյութական և ոչ նյութական արժեքների ու բարիքների փոխանակությունը: Այս առումով հետաքրքիր է՝ Ferguson J., Cultural Exchange: New Developments in the Anthropology of Commodities, Cultural Anthropology, Vol. 3, No. 4 (Nov., 1988), pp. 488-513.

յանը փոխանակային գործընթացներին մասնակցության ունակությունների տեսանկյունից բնութագրելու դեպքում կարելի էր առանձնացնել չորս հիմնական խումբ.

- ա) հիմնարար կարիքները բավարարելու անընդունակ շերտ,
- բ) նվազագույնը բավարարող շերտ,
- գ) ոչ լիարժեք բավարարող շերտ,
- դ) հիմնականում բավարարող շերտ:

Առաջինը սննդի նվազագույնից ավելին ապահովելու անընդունակ շերտն էր: **Երկրորդը** կարողանում էր բավարարել սննդի նվազագույնը եւ մաշված հագուստը թարմացնել ամենաէժան գներով վաճառվող անորակ հագուստով: **Երրորդի** սննդի նվազագույնի տեսականին հազվադեպ ներառում էր մսեղեն և կաթնեղեն, իսկ հագուստի պահանջմունքը բավարարում էր, ինչպես երկրորդ շերտը: **Վերջին շերտի** կողմից մասնաբերքի կամ կաթնամթերքի օգտագործումն առավել պարբերական բնույթ ուներ, իսկ հագուստի տեսականին նա ի վիճակի էր դարձնել ոչ շատ բազմազան եւ ոչ թանկարժեք:

Այս շերտերը կարելի է համապատասխանաբար բնութագրել որպես **չքավորներ, աղքատներ, խիստ կարիքավորներ և կարիքավորներ**¹⁷: Դրանց հարաբերակցությունը տարբեր տարիներին Երևանում ունեցել է որոշ փոփոխություններ: Սակայն սրանք բոլորն էլ այն խմբերն են, ում սննդի վրա կատարվող ծախսերը ամսական կտրվածքով կազմում են ընտանիքի բյուջեի 70 %-ից ավելին, ինչը նշանակում է, որ այս խմբերը հիմնականում զբաղված են այնպիսի արժեքների փոխանակմամբ, որոնք նյութական արժեքների ոլորտում են և այն էլ՝ ոչ բարձր որակի: Համեմատության համար ասենք, որ բնակչության սպառողական ծախսերում պարենային ապրանքների վրա կատարվողը միջինը կազմում է 55.7 %¹⁸:

Եթե փոխանակային գործառույթը խախտվում է քաղաքի բնակչության մեծամասնության եկամուտների կրճատման հաշվին՝ հոգուտ փոքրամասնության եկամուտների մեծացման, դա հանգեցնում է մեծամասնության փոխանակային հնարավորությունների և կամքի դրսևորման սահմանափակմանը:

Շուկայական տնտեսության պայմաններում հասարակության փոխանակային հնարավորությունների կրճատումը նշանակում է քանակական և որակական առումներով սահմանափակել հասարակական լայն խմբերի սպառողական հնարավորությունները՝ հանգեցնելով սպառողական նվազագույնի կամ գոյատևման: Նման դեպքում տնտեսական լծակների միջոցով հասարակության մեծամասնությանը պարտադրվում է փոխանակային գործընթացներում սեփականության տիրապետման ճանապարհով կամքի արտահայտման անկարողություն կամ հանրային կամազրկում: Այսինքն՝ իրավիճակ, երբ հասարակության անդամների գործունեությունը չի հանգեցնում սեփականության այնպիսի ձևերի առաջացման, երբ անհատը կարող է մասնակցել շուկային ապրանք առաջարկելուն կամ առաջարկվող ապրանքների արտադրմանը:

Գոյատևման պայմաններում անհատի կամազրկումը և գործունեության հնարավորությունների սահմանափակումը, ապրանքների փոխանակային գործընթացների բազմազանության աղքատացումից զատ, հանգեցնում է նաև հա-

17 Այս խնդրի մասին տես՝ Թադևոսյան Ա., Գոյատևման ռազմավարությունը հասարակական համագործակցության համատեքստում, Եր., 1998, էջ 16:
18 Տես՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2010, <http://www.armstat.am/file/doc/99461558.pdf>

սարակական դերերի բազմազանության սահմանափակման: Ստեղծված միօրինակության պայմաններում անկում է ապրում սեփական դերի ու հեղինակության հանդեպ մտահոգությունը և հիերարխիկ սանդղակով ցածրից բարձրին անցման ձգտումը՝ հաճախ պարզապես հասարակական դերերի աստիճանասանդղակի ներդրության ու բազմազանության բացակայության պատճառով: Այսօր գործառույթում գրեթե դուրս են եկել հեղինակավոր այնպիսի դերեր, ինչպիսիք են՝ «գիտնականը», «դասախոսը», «արվեստագետը», «ինժեները», «ուսուցիչը», «հմուտ արհեստավորը», «հմուտ մասնագետը» և այլն: Գոյատևմանն ուղղված տնտեսական գործունեություն վարող անձինք կարևորում են ընտանիքի գոյատևման պահանջները բավարարող աշխատանք ունենալը՝ անկախ նրա բնույթից:

Հայաստանում հասարակական դերերի փոխանակային գործընթացը տեղի է ունենում ոչ թե բուն դերերի փոխանակային հարթությունում, այլ դրանք ներկայացնող արտաքին ցուցիչների: Դրանք հիմնականում ընդօրինակվում են ունեցվածքային տեսանկյունից իրական բարձր ապրելակերպ ունեցող խավից և առավելապես վերաբերում են հագուստին, կենցաղային սպառման ապրանքներին և այլն: Հյուրընկալության ժամանակ մատուցում են «հարգի» կերակուրներ և խմիչքներ: Սա սոցիալական դերի ընդօրինակում է՝ ոչ համապատասխան եկամտային հիմքի վրա և ըստ էության՝ իռացիոնալ այնպիսի մի երևույթ է, որը կաշկանդում է զարգացման գործընթացները: Շատերի կողմից աղքատությունը հաճախ ընկալվում և մեկնաբանվում է որպես այնպիսի մի վիճակ, երբ անձը կամ ընտանիքը չեն կարողանում ապահովել հասարակայնորեն ներկայանալի դերի արտաքին ցուցիչները:

Փաստորեն, աղքատության ընկալումը Հայաստանում չի համապատասխանում իրական աղքատության չափանիշներին: Ուստի միջինից ցածր ապրելակերպ ունեցող շատ ընտանիքներ հաճախ իրենց աղքատ չեն գիտակցում: Հետևաբար՝ հասարակական դերերի փոխանակային գործընթացները նույնպես չեն համապատասխանում եկամտային հիմքի վրա սեփականության փոխանակային գործընթացներին: Պատկերավոր ասած՝ հայ հասարակության սոցիալական զսպանակը վարընթաց սեղմելի է ոչ թե մինչև եկամտների ստորին սահմանը (իրական աղքատությունը), այլ ըստ ունեցվածքային հատկանիշի՝ հասարակական դերերի ցուցիչների (աղքատության ընկալման): Ըստ այդմ՝ Հայաստանում ծայրահեղ բևեռացմանը հակազդող գործընթացների առանձնահատկությունը պայմանավորված է ոչ միայն հասարակական-տնտեսական շերտավորման բուն գործոններով, այլև մարդու սոցիալական կարգավիճակը ձևավորող ցուցիչների ազգային ընկալումներով: Սրանով է ըստ երևույթին պայմանավորված Երևանի բնակչության կողմից սոցիալական պրոբլեմները հանդուրժելու՝ համբերատարության բարձր աստիճանը: Փաստորեն, այն կապված է ոչ այնքան բարեկեցության իրական աստիճանի, որքան սեփական կարգավիճակը հասարակայնորեն ներկայացնող ցուցիչների և ընտանեկան ինքնասիրության ու պատվի վտանգման խնդրի հետ:

Որակական հետազոտությունները թույլ են տալիս եզրակացնել, որ Երևանում գոյատևման վիճակում գտնվող խմբերը օտարված են բարձրորակ նյութական արժեքների փոխանակային գործընթացներից, ինչպես նաև՝ այնպիսի զարգացումներից, որոնք նպաստում են մարդու առաջադիմությանը, նրա մշակու-

քային կապիտալի դինամիկ վերարտադրությանը: Ավելին, փոխանակային գործընթացներից օտարվածության երկարատևությունը շատ աղքատ ընտանիքների ներկայացուցիչների մոտ (հատկապես՝ միջին ու ավագ սերնդի) առաջացրել է մշակութային կապիտալի հետընթաց, ինչը բացասաբար է ազդում ոչ միայն անձնական, այլև հասարակական զարգացման վրա: Այսինքն՝ մշակութային, հոգևոր, ժամանցային և նմանատիպ բարիքներից օգտվելու հնարավորությունից զրկվածության պատճառով մարդիկ պայմաններ չեն ունեցել իրենց գիտելիքներն ու հմտությունները թարմացնելու: Դրա հետևանքով նման անձնավորությունները հաճախ ոչ միայն չեն զարգացել մշակութային ու ինտելեկտուալ առումներով, այլև կորցրել են նույնիսկ այն, ինչ ունեցել են¹⁹:

Սոցիալապես անապահով խավերի մշակութային կողմնորոշումների ու վարքի հետ կապված մեր դիտարկումները ցույց են տալիս, որ նրանց մոտ մշակութային, հոգևոր և մտավոր պահանջների ընդգրկումը չափազանց նեղացել է: Շատերն ունեցել են երաժշտական նախընտրությունների, գրական-գեղարվեստական բնույթի պահանջումների անկում: Նախկինում նրանցից ոմանք հնարավորություն են ունեցել, բացի սննդից, գումար հատկացնել նաև գրքերի, երաժշտական տեխնիկայի, մտավոր, հոգևոր ու գեղագիտական բնույթի պահանջումներին ուղղված այլ ապրանքների ձեռքբերմանը: Կարողացել են նաև հաճախել համերգներ, ցուցահանդեսներ, ժամանցային տարբեր տեսակի վայրեր: Իսկ աղքատացումից և փոխանակային գործընթացներին ակտիվ մասնակցության ունակությունները կորցնելուց հետո նրանք դադարել են այդ բնույթի կարիքները բավարարել, մնալով հիմնականում հեռուստատեսության հույսին: Եթե հաշվի առնենք, որ հեռուստատեսությունն էլ ներկայացնում է հիմնականում զանգվածային ցածրորակ տեղեկատվություն ու ապրանքներ, ապա պարզ է դառնում, որ երևանցիների մի զգալի հատվածը, որը կազմում է քաղաքի բնակչության գերակշիռ մեծամասնությունը, ունի փոխանակային գործընթացներին մասնակցության շատ սահմանափակ հնարավորություն, որը նրան թույլ չի տալիս շարժընթացորեն վերարտադրել իր տնտեսական, սոցիալական ու մշակութային կապիտալները²⁰:

5. Գոյատևման ռազմավարությունը, արժեքային փոխակերպումները և առօրեականությունը Երևանում

Ինչպես ցույց են տալիս 1990-ականներին իրականացված աղքատությանը վերաբերող հետազոտությունները, այդ տարիներին տեղի ունեցած գործընթացները, մասնավորապես ապասոցիալական բնույթի ռեֆորմները, հանգեցրին

19 Տե՛ս Գաբրիելյան Մ., Թադևոսյան Ա., Աղքատության ու գոյատևման պատկերը. հասարակության շերտավորման գործընթացները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2003, էջ 68-73:

20 Կապիտալի ձևերին անդրադարձել է ֆրանսիացի հասարակագետ Պ. Բուրդիեն: Նա առանձնացնում է հիմնականում դրա մշակութային, սոցիալական ու տնտեսական ձևերը: «Մշակութային կապիտալ» ասելով Պ. Բուրդիեն նկատի ունի մարդու կյանքի ընթացքում ձեռք բերված ունակությունների, գիտելիքների, հմտությունների պաշարը, որը նրան թույլ է տալիս դրանք ներդնել հասարակական, տնտեսական կամ մշակութային կյանքում և ստանալ հավելյալ արժեք: Այդ հավելյալ արժեքը կարող է ունենալ ինչպես մշակութային նոր հմտությունների ձև, այնպես էլ տնտեսական կապիտալի կամ սոցիալական կապիտալի ձևեր: Սանրամասն տե՛ս Bourdieu. P. 1986. The Forms of Capital; In: J. Richardson (Ed.) Handbook of Theory and Research for the Sociology of Education. New York: Greenwood Press.

բնակչության զանգվածային աղքատացմանը, ինչի հետևանքով նրա շուրջ 80 %-ը հայտնվեց գոյատևման իրավիճակում²¹, այսինքն՝ բառի բուն իմաստով օրվա հաց վաստակելու և ընտանիքի ֆիզիկական գոյատևումը ապահովելու խնդրի առջև: Երկրում իրականացվող քաղաքականությունն, ըստ էության, խնդիր չէր դրել անցումային շրջանը կազմակերպել այնպես, որը կնպաստեր Հայաստանի Հանրապետության բնակչության տնտեսական, հասարակական ու մշակութային գործունեություն ծավալելու հնարավորությունների ու ազատությունների ընդլայնմանը: Ընդհակառակը, իրականացված քաղաքականության հետևանքով ձևավորվեց մի համակարգ, որը բնակչության մեծամասնության համար անհնարին դարձրեց գործունեության ծավալումը և զարգացումը²²: Գործունեության ոլորտների նման նեղացումը հանգեցրեց փոխանակային գործընթացներում կապիտալի տարբեր ձևեր ներդնելու հնարավորությունների նվազեցմանը, հետևաբար և՛ ապրուստի միջոցների հայթայթման հնարավորությունների սահմանափակմանը:

Մարդիկ, անսպասելիորեն, շատ կարճ ժամանակում հայտնվելով իրենց ֆիզիկական գոյության պահպանման հիմնախնդրի առջև, սկսեցին առաջնային կարևորություն տալ այն արժեքներին, որոնք թույլ էին տալիս լուծել այդ առաջադրանքը: Հայաստանում բնակչության մեծամասնության կողմից որդեգրված գոյատևման ռազմավարությունը ուներ մի առանձնահատկություն. դա նրա խմբակային բնույթն էր: Այսինքն՝ ամեն մարդ ձգտում էր հոգալ իր և ընտանիքի գոյատևման խնդիրը անձնական ծանոթությունների ու կապերի օգտագործման միջոցով: Դա հանգեցրեց նրան, որ մարդկանց մեծ մասը, կարևորելով իր անձնական-ընտանեկան գոյատևման հիմնահարցի լուծումը, գրեթե լիովին անտեսում էր մնացածների գոյատևման և ընդհանրապես՝ հասարակական կարևորության խնդիրները: Դրա հետևաքնով առաջացավ մի իրավիճակ, երբ գոյատևման խնդրով տարված բնակչությունը չբարձրացրեց աղքատության ու սոցիալական այլ հիմնահարցերի լուծմանն ուղղված հասարակական, պետական մակարդակի ծրագրերի ու միջոցառումների պահանջ, ինչը կարող էր ոչ միայն կարճ ժամանակով, այլև տևականորեն լուծել գոյատևման հիմնահարցը: Փաստորեն, հիմնահարցերին դիմակայելու առավել գործածական ձևը դարձավ ընտանիքի, ազգակցական կամ ընկերական կապերի շրջագծում կազմակերպվելն ու քայլեր նախաձեռնելը²³: Պատահական չէ, որ ըստ ազգագրական նյութերի՝ հենց 1990-ականների առաջին կեսին նկատելի էր ազգակցական և ընտանեկան կապերի առավելագույն սերտացում ինչպես միևնույն գյուղի ու թաղի բարեկամների, այնպես էլ նույն մարզի տարբեր բնակավայրերում ապրող բարեկամների միջև: Այս երևույթը չէր կարող բացասական հետևանքներ ունենալ արժեքային գործընթացների ու միտումների վրա, եթե չբնորոշվեր իր դեստրուկտիվիզմով: Դրա առանձնահատկությունն այն էր, որ մարդիկ ոչ միայն պատրաստ չէին արժևորել պետական ու հասարակական հաստատությունները, այլև ընտանիքի գոյատևումն ապահովելու համար բնակչության մեծամասնության կողմից արդա-

21 Տե՛ս Գաբրիելյան Մ., Թաղևոսյան Ա., նշվ. աշխ., էջ 116: Погосян Г., նշվ. աշխ., էջ 263:

22 Տե՛ս Թաղևոսյան Ա., Աղքատության հիմնախնդիրը պետականության զարգացման ու ամրապնդման դիտանկյունից, Եր., 2003, էջ 14:

23 Այս երևույթն, ի դեպ, նկատվել է նաև օտար հետազոտողների կողմից: Տե՛ս S. Platz, Society, Nation, State: Ethnographic Perspectives on Armenia, State Building and the Reconstruction of Shattered Societies (Conference Report), 1999.

րացվում էր հանրային շահի ստորադասումը հատվածականին ու մասնավորին²⁴:

Այդ տարիներին նման դեստրուկտիվ արժեքների տարածվածությունը հանգեցրեց նաև հոգեմտավոր ու ընդհանրապես բոլոր տեսակի ոչ նյութական արժեքների ստորադասմանը գոյատևման արժեքներին: Ստեղծված իրավիճակում արժևորվում էր այն, ինչն անկախ ամեն ինչից թույլ էր տալիս լուծել ընտանիքի գոյատևման առօրեական խնդիրը: Դրա վառ օրինակներից մեկը կարելի է համարել ընտրությունների շրջանում քվեների վաճառքի տարածված դեպքերը, երբ առաջնորդվելով գոյատևման հիմնախնդրի կարճատև, օրապահիկ լուծման առաջնայնությամբ, բնակչության բավականին սովոր գանգվածը վաճառեց ձայները, այսինքն՝ հանրային արժեք հանդիսացող ընտրությունը: Արժեքների խմբակայնացումը և հարմարեցումը գոյատևման հիմնախնդրին հանգեցրեց նրան, որ հանրային ու հոգևոր բնույթի արժեքները ոչ միայն հայտնվեցին նյութական արժեքներին ստորադաս վիճակում, այլև հաճախ դուրս մղվելով փոխանակային գործընթացներում գործուն կերպով շրջանառվող «իրական» արժեքների շարքից, արտամղվեցին «իդեալական» արժեքների մակարդակ²⁵, հաճախ կարևորվելով խոսքի, բայց ոչ գործի մակարդակում:

Առօրյա կյանքում գոյատևման հիմնահարցի կարևորության աճը փաստորեն հանգեցրեց մարդկանց նպատակադրումների, կյանքի ռազմավարությունների ու արժեքային գերակայությունների խիստ նյութականացմանը: Դա հանրային հարաբերություններում մեծացրեց համագործակցությունը նյութական արժեքների փոխանակության շուրջ և հակառակը՝ թուլացրեց ոչ նյութականը: Նշվածն իր հերթին ազդեց նաև աղքատության հաղթահարման առումով ռազմավարական կարևորություն ունեցող մշակութային կապիտալի արտադրության ու վերարտադրության գործընթացների վրա:

6. Մշակութային կապիտալն ու աղքատությունը Երևանում

Փոխանակային գործընթացների վերը նկարագրված իրավիճակը խիստ բացասական է ազդել գոյատևման առջև կանգնած տնային տնտեսությունների մշակութային կապիտալի վերարտադրությունն ապահովող ունակությունների վրա: Մշակութային կապիտալի զարգացումը, ինչպես ցույց են տվել աղքատության հարցերին մվիրված հետազոտությունները, ուղղակիորեն կապված է մարդկանց նյութական վիճակի ու տնտեսական կապիտալի ձևավորման ու վերարտադրության հետ²⁶: Այն առանցքային նշանակություն ունի մարդկային զարգացման և աղքատության հաղթահարման համար²⁷:

Խնդիրն այն է, որ մշակութային կապիտալը կուտակվում է մարդու ծննդից ի վեր՝ նրա սոցիալականացման գործընթացում: Դա տեղի է ունենում ընտանիքում, թաղամասում և հասարակական այն միջավայրերում, որտեղ ընթանում է անհա-

24 Տե՛ս Գաբրիելյան Մ., Թաղևոսյան Ա., նշվ. աշխ., էջ 88-93:
 25 Այստեղ «իրական» են կոչվում այն արժեքները որոնք կարևորվում են ինչպես խոսքի, այնպես էլ գործի մակարդակներում, իսկ «իդեալական»՝ երբ որևէ բան արժևորվում է խոսքով, բայց գործնականում անտեսվում է: «Իրական» և «իդեալական» արժեքների մասին մեր մոտեցումները տե՛ս Ա. Թաղևոսյան, Արժեքային գործընթացներն ու միտումները Հայաստանում, Եր., 2000:
 26 Տե՛ս Yapa L. What Causes Poverty?: A Postmodern View ; In: Annals of the Association of American Geographers, Vol. 86, No. 4 (Dec., 1996), pp.707-728.
 27 Տե՛ս Sen A. Development: Which Way Now?; In: The Economic Journal, Vol. 93, No. 372 (Dec., 1983), pp. 745-762.

տի կայացումը, ինչպես նաև այն հաստատություններում, որոնք ապահովում են անհատի մշակութային կապիտալի ձևավորումը կրթության միջոցով²⁸: Դրանք հիմնականում նախակրթական, հանրակրթական, բուհական հաստատություններն են: Նաև՝ գեղագիտական կենտրոնները, թատերական, երաժշտական, մարզական և այլ կառույցները, որոնք թույլ են տալիս մարդուն իր մեջ բացահայտել ու զարգացնել այնպիսի ունակություններ, որ հետագայում հնարավոր կլինի առարկայացնել ու դարձնել հանրային ու տնտեսական արժեք ունեցող ունակություն: Այդպիսին կարող է լինել երաժշտական, մարզական, գիտական, նորարարական, գեղագիտական և ցանկացած այլ ունակությունն ու հմտությունը, որը կարելի է ներդնել նյութական ու ոչ նյութական արժեքների փոխանակային գործընթացների մեջ: Մարդու ունակությունները, որոնք հնարավոր է լինում ներդնել փոխանակային գործընթացներում, շրջանառության ընթացքում կարող են ձևավորել հավելյալ արժեք: Ունակությունը, հմտությունը, գիտելիքը և ոչ նյութական բնույթ ունեցող ցանկացած մարդկային արժանիք, որը ներդրվում է հանրային կյանքի շրջանառության մեջ, ստանում է կապիտալ, քանի որ շրջանառության ընթացքում կարող է ձևավորել հավելյալ արժեք: Մշակութային կապիտալի ձևավորած հավելյալ արժեքը կարող է ունենալ իր արտահայտությունը՝ կապիտալի տարբեր ձևերով: Օրինակ՝ եթե մարդուն հնարավորություն է տրվում զարգացնելու և համերգի կամ ձայնասկավառակի տեսքով ներդնելու սեփական երաժշտական ունակությունը, ապա այդ ոչ նյութական արժեքների փոխանակային գործընթացը կարող է հավելյալ արժեք ձևավորել՝ դրանից ստացվող դրամական եկամուտի տեսքով (տնտեսական կապիտալ), տվյալ անհատի երաժշտական ունակության կատարելագործման ու մասնագիտական աճի ձևով (մշակութային կապիտալ), կարգավիճակի, հեղինակության ու նոր կապերի ձևավորման միջոցով (սոցիալական կապիտալ):

Նշվածը ցույց է տալիս, որ մշակութային կապիտալի ձևավորումն ու զարգացումը հասարակության համար ունի հիմնարար նշանակություն և այն կարող է առանցքային դեր խաղալ աղքատության հաղթահարման տեսանկյունից, եթե աղքատ խավերի մշակութային կապիտալի ձևավորման գործընթացներում իրականացվեն նրանց պակասող ֆինանսական, մշակութային և սոցիալական ներդրումները²⁹: Այդ ներդրումները կարող են լինել տարբեր ծրագրերի ու քաղաքականությունների մշակման ու իրականացման տեսքով, ինչը թույլ կտա մարդկանց դուրս գալ այդ խավերի մոտ խրոնիկական բնույթ ստացող աղքատության փակ շրջանից:

Խնդիրն այն է, որ ինչպես ցույց են տալիս Երևանին վերաբերող մեր որակական հետազոտության տվյալները, քաղաքային բնակչության մի զգալի հատված այսօր, չնայած հանրակրթական հաստատություններ հաճախելուն, ունակ չէ ձևավորել ու զարգացնել որակյալ մշակութային կապիտալ, իսկ այն ձևավորելու դեպքում՝ ներդնել փոխանակային գործընթացների մեջ, քանի որ Երևանում փոխանակային գործընթացների բնույթն այնպիսին է, որ աղքատ ու անապահով խավերը գրեթե լիովին զրկված են դրանց մասնակցելու, դրանցում ներդրումներ անելու և հավելյալ արժեք ստանալու հնարավորությունից: Այսպես, օրինակ,

28 Stéu Bourdieu. P., նշվ. աշխ., էջ. 47-49:

29 Stéu Sen A., Poverty: An Ordinal Approach to Measurement; In: Econometrica, Vol. 44, No. 2 (Mar., 1976), pp. 219-231.

2011 թ. մեր իրականացրած փորձագիտական հարցազրույցների տվյալների համաձայն՝ փորձագետների 70.8 %-ը գտնում է, որ աղքատ ու անապահով ընտանիքների երեխաները ունենում են դասագրքերի ձեռքբերման դժվարություններ: 56.2%-ն էլ նշում է, որ նույն սոցիալական խավերի մոտ առկա են գրեմական պիտույքների ձեռքբերման բարդություններ: 47.9%-ի կարծիքով՝ նրանք դժվարանում են դպրոց հաճախելու համար պատշաճ և սեզոնային հագուստ ձեռք բերելու հարցում, իսկ 60.4%-ն էլ այդ խմբերի գլխավոր հիմնախնդիրների շարքում առանձնացնում է արտադասարանական պարապմունքներ ու խմբակներ հաճախելու հարցը: Այս առումով Երևանի համար հիմնարար խնդիր է նաև դպրոցների միջև առաջ եկած բեռնացումը՝ քաղաքի կենտրոնում ձևավորված այսպես կոչված՝ «էլիտար» դպրոցների առկայությունը, որոնց աշակերտների գերակշիռ մեծամասնությունը սոցիալապես բարձր ապահովություն ունեցող ընտանիքների երեխաներ են: Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներն այդ դպրոցներ պարզապես չեն էլ փորձում դիմել: Խիստ մեծացել է նաև բարձրագույն կրթության մատչելիության տարբերությունը սոցիալապես անապահով խավերի և հարուստ խավերի միջև: Հարուստ խավերի ու աղքատ խավերի միջև նման բեռնացումը հասնում է շուրջ 15 անգամի³⁰:

Հաշվի առնելով մի կողմից՝ մարդկային զարգացման հնարավորությունների միջև բեռնացվածությունը, մյուս կողմից՝ կապիտալի տարբեր ձևեր վերարտադրելու և փոխանակային գործընթացներին մասնակցության սահմանափակումները, կարելի է ասել, որ Երևանում ձևավորվել է հնարավորությունների զգալի բեռնացում ու անհավասարության խորացում: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ նման երևույթների պատճառով նյութական աղքատությունը վեր է ածվել նաև հնարավորությունների աղքատության, ինչը քաղաքի անապահով խավերի համար ստեղծում է խրոնիկական և վերարտադրվող աղքատության իրավիճակում մնալու վտանգ:

Հայաստանում աղքատության հաղթահարման գործում Երևանն ունի առանցքային դերակատարություն: Այդ պատճառով քաղաքում ընթացող գործընթացները հիմնարար նշանակություն ունեն Հայաստանի զարգացման համար: Երևանում տեղի ունեցողը կարևոր է ոչ միայն ինքնին, այլ նաև այն առումով, թե ինչպես է դա ազդում այլ գործընթացների վրա: Փորձենք ցույց տալ, թե ինչպես է աղքատությունն ազդել հատկապես մայրաքաղաքի մշակութային ռեսուրսների ձևավորման վրա, և ինչպիսին է դրա հնարավոր անդրադարձը զարգացման, սոցիալական կազմի փոփոխության ու միջին խավերի ձևավորման հեռանկարի տեսանկյունից:

Ընդհանրապես քաղաքների ուսումնասիրության մեջ ընդունված կարծիքներից մեկն այն է, որ քաղաքը մի միջավայր է, որտեղ մարդը անհատական մակարդակում կորցնում է մշակութային արժեքների ձևավորմանը համակողմանի ու համապարփակ կերպով մասնակցելու հնարավորությունը, քանի որ աշխատանքի տրոհման հետևանքով նա ստիպված է լինում իր ունակությունները զարգացնել և իրացնել գործունեության նեղ ոլորտներից որևէ մեկում: Այսինքն՝ մեծ քաղաքում մարդը ստիպված է մասնագիտանալ մի որևէ նեղ ոլորտում, կատարելապես յուրացնել տվյալ ոլորտի հմտությունները, որպեսզի կարողանա մասնակցել փոխանակային ինտենսիվ գործընթացներում իր հմտությունները ներդնելու և դրանցից

30 Տե՛ս Կայուն զարգացման ծրագիր, էջ 254:

օգուտ ստանալու գործին: Դրա հետևանքով տուժում է մարդու համակողմանի մշակութային զարգացումը, քանի որ նա ժամանակ չի ունենում յուրացնելու այն բոլոր հմտությունները, որոնք անհրաժեշտ են իրեն: Բայց, միևնույն ժամանակ, քաղաքը շնորհիվ հենց այդ հատկանիշի, դառնում է այն միջավայրը, ուր հնարավոր է լինում բարձր արդյունքների հասնել գործունեության առանձին նեղ ոլորտներում, որոնք ունենում են ոչ միայն անհատական կարևորություն (ապահովելով անհատի բարեկեցությունը, զարգացումն ու ինքնաիրացումը), այլև հասարակական նշանակություն, քանի որ օգտակար են դառնում մնացած մարդկանց համար նույնպես: Այդ պատճառով քաղաքներում ստեղծվում են ինստիտուտներ՝ անհատական մակարդակով ձևավորված մշակութային կապիտալի առարկայացումները հանրայնացնելու և մյուսների համար մատչելի ու հասանելի դարձնելու նպատակով: Միևնույն ժամանակ, քաղաքը՝ որպես փոխանակային հարաբերությունների կազմակերպման հզոր ու դիֆերենցված միջավայր, թույլ է տալիս նաև անհատական մակարդակում համակողմանիության կորուստը լրացնել այլոց ստեղծած մշակութային արժեքների միջոցով՝ դրանց հաղորդակցման ու փոխանակության մատչելիությունն ու հասանելիությունը ապահովող ինստիտուցիոնալ մշակույթի շնորհիվ: Սա թույլ է տալիս անհատական մակարդակում մշակութային կապիտալի կուտակման այնպիսի զգալի քանակական ու որակական աճ ապրել, ինչը հնարավոր չէ այլ միջավայրերում³¹: Այսինքն՝ զարգացման գործընթացներում քաղաքի ունեցած գլխավոր դերակատարությունը նյութական ու ոչ նյութական բարիքների և արժեքների ձևավորման ու փոխանակության հնարավորինս լայն և բազմաբնույթ միջավայրի ստեղծումն է նրա բնակիչների համար:

Երևանի նշանակությունն այս առումով մեզ համար հիմնարար է ոչ միայն այն պատճառով, որ նա Հայաստանի միակ մեծ քաղաքն է, ուստի կարող է առանցքային դեր խաղալ սոցիալիզմի խորհրդային բնորոշից արդիական հասարակությանն անցման հաջողությունն ապահովելու գործում: Կարևոր է նաև այն իրողությունը, որ ըստ էության, արդիական ըմբռնումով Երևանը ուրբանիզացիոն գործընթացների իրականացման պոտենցիալ ունեցող միակ քաղաքն է մեր երկրում: Այստեղ առկա են ոչ միայն կրթամշակութային ու սոցիալ-մասնագիտական բազմազանությամբ աչքի ընկնող տեղի բազմազան մարդկային ռեսուրսները, այլ նաև անընդհատ Երևան ժամանող մարզային գյուղական ու քաղաքային բնակչության առավել հարմարվող ու մրցունակ մասը: Հատկապես 2000-ականներին այս հոսքերը խիստ ուժեղացել են: Ուստի հանրապետության մասշտաբով մարդկային ռեսուրսների նման խոշոր հոսքերի ռեալիզացման բազմազան հնարավորությունների սահմանափակումը ընդամենը մի քանի ոլորտներով, հիմնականում՝ շինարարություն, ծառայություններ, առևտուր, տրասպորտ ու կապ, զգալիորեն ձախողում է Հայաստանի զարգացման գործընթացներն ընդհանրապես: Ներկայումս արդյունաբերությունը շատ փոքր բաժին ունի թե՛ Երևանում և թե՛ հանրապետությունում³²: Հատկանշական է, որ մինչև ճգնաժամն ընկած վերջին տարիներին զբաղված բնակչության մոտ 40 %-ը ներգրավված էր շինարարության ոլորտում³³:

31 Այս խնդիրների տեսական քննարկումները տես Յիմմել Գ., *Большие города и духовная жизнь*, Лорос, 2002, сс. 4-12.

32 Տե՛ս Հայաստանի տնտեսական զեկույց, Եր., 2009, էջ 14:

33 Տե՛ս նույն տեղում:

Իսկ ընդհանրապես՝ տնտեսական առումով ակտիվ ու զբաղված բնակչության միայն 10-12 %-ն է ստանում միջին կամ միջինից բարձր աշխատավարձ և ունի զբաղվածության այնպիսի տեսակ, որը նպաստում է նրա մարդկային զարգացմանը: Մնացած զբաղվածների աշխատավարձը թույլ է տալիս բավարարել միայն առաջնային անհրաժեշտության կարիքների նվազագույնը: Բայց զբաղվածության վերլուծությունը առաջին հերթին ցույց է տալիս, թե որքան նեղ է Երևանում զբաղվածության ոլորտների բազմազանությունը: Դա լուրջ խոչընդոտ է Երևանի ուրբանիզացիոն գործընթացների համար: Այն բացասաբար է ազդում նաև ողջ հանրապետության զարգացման և անցման քաղաքականության ուրբանիզացիոն առաջատարի դերակատարության վրա: Ի դեպ՝ անցման շրջանում զբաղվածության առումով նման միատարր պատկերը միշտ է բնորոշ եղել Երևանին: Օրինակ՝ 1990-ականներին էլ քաղաքի զբաղված բնակչության հիմնական մասը՝ մոտ 70 %-ը, կազմում էին մանր առևտրականները կամ ինքնազբաղվածները³⁴:

Այս առումով, Երևան քաղաքում սոցիալական կառուցվածքի փոփոխությունները վերլուծելու արդյունքում կարելի է եզրակացնել, որ դրանք չեն նպաստում ոչ միայն մայրաքաղաք տեղափոխված մարդկային ռեսուրսների զարգացմանը, այլև ողջ քաղաքի առաջընթացին: Երևանն առայժմ ընդամենը նպաստում է հանրապետության համար գոյատևման հիմնահարցի լուծման որոշ ոչ լայն հնարավորությունների ձևավորմանը: Իհարկե, այստեղ դրա համար կան շատ ավելի նպաստավոր պայմաններ, քան մարզային բնակավայրերում, սակայն ասել, որ Երևանը այսօր իրականացնում է աղքատության հաղթահարմանը նպաստող գործառույթ, խիստ չափազանցված կլինի:

Եզրակացություններ

Երևան քաղաքում վերջին քսան տարում տեղի ունեցած սոցիալական շերտավորման գործընթացների հետևանքները վերլուծելու դեպքում կարելի անել հետևյալ առանցքային եզրակացությունները:

Առաջին, բնակչության գերակշիռ մեծամասնությունը օտարվել է նյութական արժեքների փոխանակությանը մասնակցելու հնարավորությունից:

Երկրորդ, դրա հետևանքով այդ խավերը օտարվել են ընդհանրապես փոխանակային բոլոր տեսակի գործընթացներից, իսկ մշակութային ու գիտակրթական արժեքների փոխանակության գործընթացներից օտարումը որոշ առումներով ծայրահեղ բնույթ է ստացել:

Երրորդ, քաղաքի բնակչության գերակշիռ մեծամասնությունը փոխանակային գործընթացներին մասնակցության սուղ ու անբավարար հնարավորությունների պատճառով ունեցել է անհատական մակարդակում մշակութային կապիտալի ձևավորման ու վերարտադրության կորուստ և փաստորեն հայտնվել է խրոնիկական, այսինքն՝ ինքնավերարտադրող աղքատության մեջ: Դա հնարավոր չէ հաղթահարել սոցիալական տրանսֆերտների՝ նպաստների քաղաքականությամբ, այլ միայն մշակութային տրանսֆերտների, այսինքն՝ մարդկանց անհատական զարգացման մեջ ներդրումներ անելու միջոցով:

³⁴ Թադևոսյան Ա., Արտագաղթի հետևանքների ազդեցությունը Երևան քաղաքի հասարակական մշակութային կյանքում, «Երևան. գիտական հոդվածների ժողովածու», Եր., 2006, էջ 62-68:

Չորրորդ, դրա հետևանքով զգալիորեն նվազել են մշակութային, գիտակրթական բնույթի արժեքների վերարտադրության գործընթացներին հասարակության մասնակցության հնարավորությունները:

Հինգերորդ, ստեղծվել է մի իրավիճակ, երբ քաղաքային բնակչության մարդկային ու մշակութային ռեսուրսները արդյունավետորեն չեն օգտագործվում, ինչը խոչընդոտում է անհատական ու ընտանեկան մակարդակում մարդու զարգացման, առաջընթացի և իր սոցիալական հիմնախնդիրների հաղթահարման հնարավորությունը:

Վեցերորդ, նշվածը խանգարում է նաև Երևան քաղաքի ուրբանիզացման գործընթացներին և խիստ նվազեցնում հանրապետության զարգացման գործում նրա դերակատարության հնարավոր արդյունավետությունը:

Երևան քաղաքում աղքատության ու գոյատևման ռազմավարության խրոնիկական իրավիճակի հաղթահարման հիմնական բարդությունը կապված է քաղաքի գործառույթի անտեսման հետ: Այն չի դարձել ողջ հանրապետության համար նպաստավոր, բազմազան ու բազմազործառույթ միջավայր, ուր տարբեր բնակավայրերից հոսող մարդկային ներուժը կկարողանա իր մշակութային կապիտալը ներդնել ու ձևավորել հավելյալ արժեք՝ նոր մշակութային, սոցիալական ու տնտեսական կապիտալների ձևով: Այդ հնարավորությունները Երևանում խիստ սահմանափակ են, և դրանում հիմնական բացասական դերակատարությունն իրականացնում է գործող իշխանությունը, որը քրեական բնույթի օլիգարխիկ բիզնեսի հանդեպ հովանավորչական քաղաքականության պատճառով արգելափակում է Երևան քաղաքում բնակվող կամ այդտեղ աշխատանք գտնելու նպատակով եկող և քաղաքի բնակչության ավելի քան 80 %-ը կազմող մնացած խավերի գործունեության հնարավորությունը: **Ըստ էության, իշխանության ներկա քաղաքականությունը նպաստում է Երևանում աղքատության ու գոյատևման ռազմավարության վերարտադրությանը և խոչընդոտում քաղաքի զարգացումն ու աճը:** Արդեն նշել ենք, որ Երևանի համար ժողովրդի մեջ հաճախ կիրառվող բնութագրումներից մեկը «**մեծ գյուղն**» է, ինչը նշանակում է, որ նա քաղաք է ընդամենը իր չափերի մեծության, բայց ոչ գործունեությունների ոլորտների դիֆերենցվածության, բազմազանության և հնարավորությունների տեսանկյունից: Իսկ սա նշանակում է, որ առայժմ Երևանը չի դիտվում որպես հանրապետությունում աղքատության հաղթահարման և զարգացման ուրբանիզացիոն ռեսուրս և չի իմաստավորվել նման գործառույթի տեսանկյունից:

Երևանի դերի վերահիմաստավորումը՝ որպես հանրապետության բնակչության առկա մշակութային կապիտալի շրջանառության, դրա միջոցով՝ հավելյալ արժեքի ձևավորման և այն կապիտալի այլ ձևերի փոխարկման համար նպաստավոր հնարավորություններ ստեղծող քաղաքի, կարող է թույլ տալ մայրաքաղաքը վերածելու ինչպես իր ներսում, այնպես էլ ողջ հանրապետությունում գոյատևման ու աղքատության խրոնիկական իրավիճակը հաղթահարելու ռազմավարական ռեսուրսի:

Վերջ

URBAN CULTURE OF YEREVAN

Perspectives of Social Stratification and Reproduction of Cultural Capital Forms: Problems of the past 20 years

Aghasi Z. Tadevosyan

The social structure of the population of Yerevan significantly changed in the years of independence. Owing to the reforms of the 1990's main parts of the population of Yerevan unexpectedly fell in to poverty. Poverty influenced urban processes in a very negative way. The range and diversity of people's spheres of activity decreased critically. As a result, the main part of the population of the city was alienated from the transition processes. Poverty especially limited their opportunities of participation and investment in the exchange processes and the transformation of their capacities into various forms of financial, cultural and social capital. That influenced the reproduction of the cultural capital of vulnerable strata negatively, decreasing their chances to overcome poverty and threatening with the transformation of poverty into a self-reproductive phenomenon. The policy of social transfers is not sufficient for the prevention of such a perspective. First of all, investments are needed for cultural capital's quality improvement and its dynamic reproduction.

ՄԱՐԴԱԲԱՆԱԳՐԱԿԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Գ. (Թ) ԳՐԱՐԻՒՄ, ԲԻՎԼ 3 (35) հունիս-սեպտեմբեր, 2011

ՎԵՄ համահայկեակազմի հանդես